



## Ֆերմերների Համար Վերապատրաստման Նյութեր



### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսությունը բույսերի համար, կենդանիների, սնկերի և սննդի համար օգտագործվող կենսաբանական արտադրանքների բուծումն ու բազմացումն է: Գյուղատնտեսությունը առկա է բոլոր երկրներում և համարվում է ամենակարևոր ոլորտներից մեկը: Գյուղատնտեսությունը բնակչությանը սննդամթերքով է ապահովում, իսկ արդյունաբերության շատ ճյուղերին՝ հումքով: Գյուղատնտեսությունը ընդգրկում է անասնապահության և երկրագործության ճյուղերը:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում գյուղատնտեսությունը խոշոր տնտեսական ոլորտ է: Գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը 97.2%-ը արտադրվում է գյուղացիական տնտեսություններում, իսկ 2.8%-ը գյուղատնտեսական կազմակերպություններում:

## ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Օրգանական գյուղատնտեսության նպատակն է, զուգընթաց գյուղատնտեսական մթերքների արտադրության տնտեսական շահավետությանը, ուշադրություն դարձնել բնապահպանական հիմնախնդիրներին: Օրգանական գյուղատնտեսությունը չի կիրառում քիմիական սինթետիկ միացություններ, տոքսիկ նյութեր, կայուն պեստիցիդներ, թունաքիմիկատներ, արհեստական խթանիչներ, հանքային պարարտանյութեր: Դրանց փոխարեն օգտագործվում են օրգանական ծագման պարարտանյութեր՝ գոմաղբ, կենսահումուս, տորֆ, որոնք պարունակում են բույսերին անհրաժեշտ բոլոր սննդատարրերը: Նրանք միաժամանակ

հարստացնում են հողը օրգանական նյութերով, նպաստում հողի բերրիության բարձրացմանը և ստրուկտուրայի բարելավմանը: Բույսերի հիվանդությունների դեմ պայքարում են ոչ թե թունաքիմիկատներով, այլ բուսական թուրմերի կիրառմամբ: Օրգանական սննդամթերքի ամենամեծ արժեքն այն է, որ այն անվտանգ է առողջության համար, պարունակում է ավելի շատ վիտամիններ, հանքային աղեր և այլ սննդարար տարրեր, զերծ է վնասակար քիմիկատներից:

## ՊՈՍԻԴՈՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Պոմիդորը մորմազգիների ընտանիքին պատկանող մշակաբույս է: Համարվում է աշխարհում ամենատարածված և արժեքավոր բանջարեղեններից մեկը: Հայաստանում պոմիդորը մշակվում է կլիմայական բոլոր գոտիներում, բայց հիմնականում կենտրոնացած է Արարատյան հարթավայրի շրջաններում: Պոմիդորը ջերմասեր բույս է: Լավագույն ջերմաստիճանը աճի համար 22-27°C է: 15°C-ից ցածր ջերմաստիճանի



դեպքում, բույսերը չեն ծաղկում, իսկ 10°C-ի դեպքում՝ աճը կանգ է առնում: Պոմիդորի համար օդի լավագույն հարաբերական խոնավությունը 55-65% է: Արարատյան հարթավայրում պոմիդորը ջրվում է 12-16 անգամ վեգետացիայի ամբողջ շրջանում: Պոմիդորը պահանջկոտ է լույսի հանդեպ, մասնավորապես սաժիլներ աճեցնելիս: Պոմիդորի լավագույն նախորդներն են ծաղկակաղամբը, սպիտակագլուխ կաղամբը, ընդեղենները, դդմիկը: Գլուխ սոխը թույլատրելի նախորդ է հանդիսանում: Եթե պոմիդորը մշակել առանց ծածկոցներ օգտագործելու, ապա սաժիլումը Արարատյան հարթավայրում պետք է կատարել ապրիլի 20-ից, իսկ նախալեռնային գոտում՝ մայիսի 15-ից հետո: Հնարավորության դեպքում սաժիլները ավելի նպատակահարմար է աճեցնել տորֆաբուսահողային թաղարներում: Պոմիդորի պտուղները չեն հասունանում միաժամանակ, այդ իսկ պատճառով բերքը հավաքում են հասունացման տարբեր փուլերում:

## ՎԱՐՈՒՆԳԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ



Վարունգը դոմագգիների ընտանիքին պատկանող բանջարեղեն է: Կարճ վեգետացիոն շրջանի շնորհիվ մշակվում է կլիմայական բոլոր գոտիների, ինչպես բաց, այնպես էլ փակ գրունտներում: Վարունգի սերմերը պետք է ցանել միայն տաքացած հողի մեջ, քանի որ աճում են 120°C-ից ոչ ցածր ջերմաստիճանում: Վարունգի աճման ու զարգացման համար օդի լավագույն ջերմաստիճանը 25-300°C է, իսկ հողինը՝ 20-250°C: Վարունգի համար լավ նախորդներն են պոմիդորը, կաղամբը, սոխը և ընդավորները: Բերքատվության բարձրացման գործում շատ կարևոր են սերմերի որակը և նրանց նախապատրաստումը ցանքին: Լավագույն արդյունք են տալիս 2-3 տարեկան սերմերը: Պտղաբերության սկզբում պտուղները հավաքում են 2-3 օրը մեկ, իսկ մասսայական պտղաբերության շրջանում հավաքում են ամեն օր կամ օրը մեջ:

## ՄԻՍԵՌԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ



Միսեռը պատկանում է բակլազգիների ընտանիքին: Այն միամյա բույս է: Միսեռը մշակում են սննդային նպատակով: Միսեռի համար լավ նախորդներ են հացահատիկները, շարահերկ մշակաբույսերը: Նախորդ մշակաբույսի բերքահավաքից անմիջապես առաջ խորհուրդ է տրվում կատարել խոզանի երեսվար 10-12սմ

խորությամբ: Վեգետացիայի ընթացքում դաշտը 2-3 անգամ ոռոգել: Միջշարային տարածություններում անհրաժեշտ է գերծ պահել մոլախոտերից և փուխը վիճակում: Երբ ունդերի մեծ մասը բույսի վրա դեղնում է, Իսկ հատիկը երբ ամրանում է, սիսեռը հարկավոր է հավաքել:

## ՀԱՃԱՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հաճարը դաշտավլուկազգիների ընտանիքին պատկանող բույս է, համարվում է ցորենի տեսակ: Հաճարը լինում է գարնանացան և աշնանացան: Այն ազգային պարենային մշակաբույս է և օգտագործվում է որպես բարձրորակ ձավար: Ունի վաղահաս և միջահաս տեսակներ: Հաճարը չորադիմացկուն է և չափի մեջ տոթադիմացկուն: Փոշեմրրիկի և ժանգի նկատմամբ դիմացկուն է: Սպիտակահասկ հաճարը ուշահաս է, ունի բարձր ու հաստ ցողուններ, իսկ կարմրահասկը՝ վաղահաս է, ցողուն ունի միջակ բարձրության, սակայն բերքատվությունը բարձր է: Հաճարը մշակելու համար հողը պետք է սկսել մշակել աշնանը՝ խոզանի երեսվարով: Հողի մակերեսը ցանքից առաջ անհրաժեշտ է հարթեցնել և նստեցնել, որի շնորհիվ սերմերը հանգիստ են ծլում: Սերմնանյութի որակը կարևոր նշանակություն ունի բարձր բերք ստանալու համար: Թփակալման փուլում հաճարը թեթև փոցխում են: Բերքահավաք կատարվում է այն ժամանակ երբ բույսերը գտնվում են լրիվ հասունացման փուլում և հատիկի խոնավությունը կազմում է 17-18%:

## ՈՍՊԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ



Ոսպը պատկանում է բակլագգինների ընտանիքին: ՀՀ-ում կա ոսպի երեք տեսակ՝ ոսպնյականման, արևելյան և ուտվող: Ոսպը պարունակում է ավելի շատ սպիտակուցներ քան ոլոռը, լոբին և սիսեռը, նա զիջում է միայն սոյային: Երբ ոսպը մշակվում է չոր կլիմայական պայմաններում, այն կուտակում է ավելի շատ սպիտակուցներ: Սկզբնական շրջանում ջերմության նկատմամբ քիչ պահանջկոտ է: Սկսում է ծլել 3-4°C ջերմաստիճանային պայմաններում, բայց համերաշխ է ծլում՝ 7-10°C-ում: Ոսպը մինչև ծաղկելը շատ ջուր է պահանջում, իր քաշի 93,3%-ը: Բայց արդեն հասունացման և ծաղկման փուլում լավ է դիմանում երաշտին: Սևահողային և շագանակագույն հողերում ոսպը բարձր բերք է տալիս: Ոսպը լավ չի աճում ծանր, թթու և ոչ խորը գտնվող հողերում, այն շատ դանդաղ է աճում սկզբնական շրջանում և շատ է ճնշվում մոլախոտերից, այդ իսկ պատճառով նրան հատկացված դաշտը պետք է մաքուր լինի մոլախոտերից: Ոսպի համար լավագույն նախորդ է հանդիսանում աշնանացան ցորենը (պարարտացված սև ցելից հետո), աշնանացան աշորան, եգիպտացորենը և կարտոֆիլը: Նա էլ իր հերթին լավ նախորդ է հանդիսանում կարտոֆիլի, վարսակի, ճակընդեղի և արևածաղկի համար: Ոսպի բերքահավաքը պետք է կատարել, երբ ներքևի ունդերը գորշացել են, հասունացել և ավարտել սեղմ ժամկետում՝ 1-3 օրվա ընթացքում:

## ՈԼՈՌԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ



Ոլոռը պատկանում է բակլազկիների ընտանիքին: Ոլոռը ցրտադիմացկուն է և վաղահաս: Վեգետացիան տարբեր սորտերի մոտ տարբեր է 7-140 օր: Հողի նկատմամբ քիչ է պահանջկոտ, լավ նախորդ է հանդիսանում բոլոր կուլտուրաների համար, ունի բարձր բերքատվություն: Ոլոռն ունի հզոր արմատային համակարգ, որի շնորհիվ ավելի լավ է դիմանում կարճատև երաշտներին, քան զարնանացան բույսերը, այն վատ է աճում ավազային, թթու հողերում, սիրում է խոնավություն, բայց վատ է տանում գրունտային ջրերի առկայությունը: Ոլոռի ունդերը անհավասար են հասունանում: Մերմի համար բերքահավաք պետք է կատարել երբ լրիվ հասունացած են ներքևի և միջին հարկի ունդերը:



## ԳԼՈՒԽ ԵՎ ԿԱՆԱԶ ՍՈՒԻ ՄՇԱԿՈՒՄԸ



Սոխը մշակվում է կլիմայական բոլոր գոտիներում և օգտագործվում գրեթե բոլոր կերակուրների մեջ: Սոխը շատ պահանջկոտ է հողի բերրիության նկատմամբ: Սոխի համար լավագույն հողերն են կավավազային, ավազակավային և հեղեղատների հողերը: Լավ նախորդներ են հանդիսանում վարունգը (գոմաղբային պարարտացում ստացած), դդմիկը, վաղ կարտոֆիլը, վաղահաս կաղամբը, պոմիդորը և աշնանացան հացաբույսերը: Գլուխ սոխն

ունի մշակման երկու եղանակ՝ միամյա և երկամյա: Միամյա մշակման համար ցանքից առաջ սոխը թրջում են մեկ օր՝ 2-3 անգամ՝ փոխելով ջուրը: Չորացնում են թրջած սերմերը մինչև որ հասնի սորունության և ախտահանում: Միամյա մշակման ժամանակ գլուխ սոխը լավ է հասունանում և ավելի վաղ ու բարձր բերք տալիս: Նախալեռնային գոտում սածիլները աճեցնում են ջերմոցներում 50-60 օրում՝ ցերեկը 15-18°C, իսկ գիշերը 6-10°C ջերմաստիճանային պայմաններում: Մեկ հեկտարին պահանջվում է 300-500 հազար սածիլ: Երկամյա մշակման ժամանակ առաջին տարին ստանում են մանր սոխ-սևոկ: Հաջորդ տարին այն տնկելով ստանում են ապրանքային գլուխ սոխ: Մեկ հեկտարի վրա տնկում են 250-600 հազար սոխուկ (4-15g սևոկ): Ամռան առաջին կեսին սնուցուն են և ջրում: Բերքահավաքը կատարում են, երբ տերևները սկսում են պառկել և սոխուկների վրա չոր թեփուկներ են առաջանում:

Կանաչ սոխը ամռան-ձմռան ամիսներին ջերմատներում և վաղ ջերմոցներում արագ աճեցվող մշակաբույս է: Սոխուկները տնկում են իրար կպած և ծածկում են 2սմ հաստության բուսահողով: Մեկ քառակուսի մետրում տնկման նորման է 10-12կգ: Վաղ ջերմոցներում սոխը աճեցնում են առաջին մշակումով: Ապրիլին սոխը պատրաստ է:



## ԿԱՐՏՈՖԻԼԻ ՄՇԱԿՈՒՄԸ



Կարտոֆիլը պատկանում է մորմազգիների ընտանիքին: Կարտոֆիլում պարունակում է մեծ քանակությամբ օսլա: Լավագույն նախորդներն են կարտոֆիլի համար հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերը, բազմամյա խոտաբույսերը և բանջարանոցային մշակաբույսերը: Պետք է առանձնացնել հզոր

վարելաշերտ ունեցող, ջրովի, թեթև ավազակավային հողեր: Նախորդ վեգետացիայի ավարտից հետո սկսում են հողի նախապատրաստումը՝ կատարելով խոզանի երեսվար՝ 5-6սմ խորությամբ: Տնկումը կատարում են 70սմ միջշարային և 22-24սմ միջբուսային տարածությամբ, 6-8սմ խորությամբ: 1հա-ի համար այս դեպքում կպահանջվի 3.5-4.0 տոննա բարձրորակ տնկանյութ և կապահովվի 55-60հազ. բույս: Երբ վարելաշերտի 10սմ խորության վրա ջերմաստիճանն հասնում է 10-12°C-ի, անհրաժեշտ է կատարել տնկում: Կարտոֆիլը վեգետացիայի ընթացքում պետք ջրել է 5-7 անգամ: Ջրել է պետք, երբ փոերը ստանում են մուգ կանաչ գույն: Առաջին անգամ սովորաբար ջրում են կոկոնակալման փուլում: Չոր եղանակին կատարվում է կարտոֆիլի բերքահավաքը, երբ փոերը չորանում են, պալարները հասունանում և հեշտությամբ անջատվում ընձյուղներից:

## ԳԱԶԱՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ



Գազարը արմատապտղային բանջարաբույս է, այն լավ աճում է մոլախոտերից մաքուր և խորը մշակված փուխր հողերում, հատկապես պարարտացում ստացած տարածքներում: Բարձր ջերմաստիճանային պայմաններում բույսի աճը կանգ է առնում: Գազարը ցանկալի է մշակել օրգանական նյութերով հարուստ ստրուկտուրային հողերում: Նոսրացումը, փխրեցումը, սնուցումը, ռոտզումը և քաղհանը ծլելուց հետո, գազարի մշակության հիմնական աշխատանքներն են: Բերքը անհրաժեշտ է հավաքել աշնանը, անձրևներից և ցրտերից առաջ՝ հոկտեմբեր ամսին:

## ԲՈՂԿԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ



Բողկը կաղամբագլխիների ընտանիքի միամյա և երկամյա բանջարաբույս է: Այն մշակվում է ամենուրեք: Օգտագործվում թարմ վիճակում: Բողկը երկամյա բույս է, իսկ ամսաբողկը՝ միամյա: Բողկերն ամբողջ վեգետացիայի շրջանում

համաչափ խոնավություն են պահանջում: Բողկը ցանում են հուլիս-օգոստոս ամիսներին, իսկ ամսաբողկը ցանում են կամ վաղ գարնանը՝ մարտին, կամ աշնանը՝ սեպտեմբերին: Բողկի համար լավ նախորդներ են հացահատիկները, վաղահաս կաղամբը, վարունգը, վաղահաս կարտոֆիլը, դդմիկը, կանաչ լոբին: Աշնան անձրևներից և ցրտահարություններից առաջ պետք է կատարել բողկի բերքահավաք, անհրաժեշտ է արմատապտուղները մաքրել փռերից և պահել նկուղներում: Ամսաբողկինը՝ պարբերաբար, տեխնիկական հասունացման շրջանում 30-40 օր հետո:

## ԲԱՂԻՋԱՆԻ (ՍՍԲՈՒԿ) ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ



Բաղրիջանը պատկանում է մորմազգիների ընտանիքին, բազմամյա բույս է, բայց մշակվում է որպես միամյա: Բաղրիջանի համար լավագույն նախորդներն

են ծաղկակաղամբը, սպիտակագլուխ կաղամբը, ընդդեմները և դդմիկը: Բադրիջանը ջերմասեր բույս է, այն պահանջկոտ է լույսի նկատմամբ, սովերոտ պայմաններում լավ չի աճում: Պահանջկոտ է նաև հողի խոնավության նկատմամբ, պակասի դեպքում նույնպես լավ չի աճում: Այն պահանջում է օրգանական նյութերով ապահովված, պարարտ, ստրուկտուրային, փխրուն հողեր: Ծլելուց մինչև բերքահավաքը տևում է 120-130 օր: Պտղաբերության շրջանը երկար է: Բերքահավաքը պետք է կատարել պարբերաբար, 3-4 օրը մեկ, հով ժամերին: Բերքը արևի տակ թողնել չի կարելի: Պտուղների տեխնիկական հասունացման ժամանակ, երբ սերմերը դեռ չեն կարծրացել, բերքը պետք է հավաքել:

## ՄԵԽԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ



Մեխը պատկանում է դդմազգիների ընտանիքին: Այն բուստանային մշակաբույս է: Մեխի մշակության համար հողը պետք է լինի սննդային հարուստ, փխրուն և ստրուկտուրային հողեր: Մեխի համար լավագույն նախորդներ են հանդիսանում բազմամյա խոտաբույսերը,

հացահատիկային, հատիկաընդդեմային մշակաբույսերը: Սերմերը, ցանքից առաջ պետք է տեսակավորել և ախտահանել, սերմերը պահելով 60-65°C տաք ջրում 3-4 րոպե, որից հետո ծածկել խոնավ ու տաք: Մեխը մշակվում է հիմնականում թմբային եղանակով: Մեխի մշակության մեջ նշանակություն ունի ակոսի խորությունը, այն պետք է լինի 30-40սմ-ից ոչ պակաս: Մեխի սերմերը կարելի է ցանել ն՝ չոր, և՛ խոնավ վիճակում: Մինչև ծաղկումը պետք է խուսափել ջրելուց, ջրել կոկոնակալման ընթացքում և աշխատել չջրել մինչև բերքահավաքը, իսկ եթե կարիք կա ապա ջրել 1-2 անգամ բացառապես օրվա հով ժամերին: Մեխի պտուղների հասունացումը սկսվում է հուլիսի վերջից մինչև սեպտեմբեր կախված տրոսային առանձնահատկությունից:



## ՁՄԵՐՈՒԿԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ



Ձմերուկը պատկանում է դոմագգիների ընտանիքին: Այն միամայա մշակաբույս է: Ձմերուկը լավ է աճում կավավազային և ավազակավային օրգանական նյութերով հարուստ հողերում, սևահողերում: Լավագույն հողերն են խամն ու խոպանը: Արարատյան դաշտի պայմաններում լավագույն ցանքի ժամկետը ապրիլի վերջին տասնօրյակն է, երբ հողի ջերմաստիճանը հասնում է 12-13°C: Ցանկալի է ցանքի ժամանակ որպես օրգանական պարարտանյութ օգտագործել կենսահումուսը: Առհասարակ մինչև ծաղկելը ձմերուկը պետք է քիչ ջրել, իսկ եթե հնարավոր է՝ բոլորովին չջրել: Դաշտը ջրել պտղակալման սկզբում և յուրաքանչյուր բերքահավաքից հետո: Ձմերուկի պտուղները սկսում են հասունանալ հուլիս-օգոստոս ամիսներին՝ կախված սորտային առանձնահատկություններից: